անգամ: Քո մէջ կայ միայն լաւ սիրտ, կան եւ լաւ հակումներ: Եթէ դու զարգանաս, կարող ես օգտաւէտ մարդ լինել: Այսօր տանելու եմ քեզ մի վանք, այնտեղ կենում է մի մարդ, մի ճշմարիտ գիտնական մրդ, քեզ յանձնելու եմ այդ մարդուն: Դու կը մնաս նրա մօտ, նա այնքան բարի է, որ սիրով կը յօժարի պարապել քեզ հետ: Նրա մօտ եթէ դու մեծ գիտութիւն եւս սովորելու չլինես, բայց զարգանալ կարող ես: Դու այժմ ունես այնքան պաշար, թէեւ հում եւ անմշակ պաշար, որ կարող է շատ նպաստել քո զարգացմանը: Դու անցար մեր հայրենիքի եթէ ոչ բոլորը, գոնէ նրա նշանաւոր մասը: Դու քո աչքով տեսար եւ տեղի վրայ ծանօթացար մեր ժողովրդի դրութեան հետ, նրա անցեալի եւ ներկայի հետ: Հայրենագիտութիւնը գլխաւոր ուսմունքն է այն անձանց համար, որոնք նոիրւում են ծառայելու հայրենիքին: Ով որ հայրենիք չի տեսել, չի ճանաչել, եւ կամենում է նրա համար մի ծառայութիւն անել, նման է այն դերձակին, որ մարդուն չտեսած, նրա չափսը չառած, նրա համար հագուստ է ձեւում: Եթէ դերձակը լաւ արհեստաւոր եւս լինի, բայց հագուստը կամ նեղ կդուրս գայ կամ լայն, կամ կարճ կդուրս գայ կամ երկար: Մի խօսքով, այլանդակ բան կը լինի: Մի այդպիսի սխալի մէջ չընկնելու համար ես ցոյց տոի քեզ մեր հայրենիքը. շատ երեւոյթների պատճառները բացատրեցի քեզ, շատ տեղերի եւ շատ ցեղերի հետ ծանօթացար դու: Ես ձգեցի քո մէջ ապագայ եւ առաջադիմութեան սերմերը միայն: Իսկ գիտութեան լոյսը կծլեցնէ, կաճեցնէ եւ պտղաբեր կը կացուցանէ նրանց: Այդքանը բաւական է, այժմ գնանք:

Մենք սկսեցինք ցած իջնել Աստղաբերդից:

— Ու՞ր պիտի գնաս, — հարցրի նրանից:

— Հնդկաստան, — պատասխանեց նա:

— Եր՞բ կը վերադառնաս:

— Այդ ես էլ չգիտեմ:

— Գոնէ ասա ինձ, թէ ինչի՞ համար ես գնում:

— Այժմ հարկաւոր չէ քեզ գիտենալ... Դու միայն կարող ես համոզուած լինել, որ վատ բանի համար չեմ գնում:

ԼԲ. «ՀԱՄՐԸ»

Աստղաբերդից ցած իջնելով, շարունակեցինք մեր ուղին դէպի Առաքելոց վանքը, որ մօտաւորապէս երեք ժամի ճանապարհով հեռու է Մուշ քաղաքից, ընկնում է նրա արեւելահարաւային կողմը, Տաւրոսի գեղեցիկ լեռնա-